827

1. Ապրելով այս չար աշխարհում՝
Գնում էի կորուստ հավիտյան,
Բայց Տեր Հիսուսը ինձ կանչեց
Ու տվեց ինձ կյանք աննման:
    Ասաց. «Ներում եմ քեզ, որդի՛ս,
    Դարձի՛ եկ, եղի՛ր Ինձ նման»,
    Ասաց. «Սիրում եմ քեզ, որդի՛ս,
    Թե սիրես՝ կապրես հավիտյան»:

2. Այնժամ մեղքերս ես տեսա,
Իմ չար լինելը հասկացա,
Աչքերս դեպ երկինք հառած՝
Սիրտս բացեցի Քո առաջ:
    Ձղջում եմ, Հիսո՛ւս, սիրելի՛ս,
    Մեղավոր եմ ես Քո առաջ,
    Ներիր ինձ, Հիսո՛ւս, սիրելի՛ս,
    Ներիր սիրովդ անսահման:

3. Ասաց՝ ներում եմ քեզ, որդի՛ս,
Տվել եմ Ես քեզ թողություն,
Գամված ձեռքերիս դու նայիր,
Շնորհել եմ Ես քեզ փրկություն:
    Հավիտյան փառք Քեզ, Տե՛ր Հիսուս,
    Տվեցիր հոգուս կյանք և լույս,
    Շնորհակալ եմ Քեզ, ի՛մ Հիսուս,
    Տվեցիր երկնային մեծ հույս:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025